

ԵՍ ԿԱՍ ԴՈՒ

Ա՛խ սիրունիկ իմ Աստղիկ,
Արի դարձիր մի աստղիկ,
Իսկ ես կտոր մի ամպիկ՝
Զորս դիտ շրջեմ կոլորտիկ:

Կամ թէ լուսնդ դաշտի մէջ,
Սպիտակ շուշան՝ խոնարհ, հեզ,
Թերթիկներիդ թառ լինեմ՝
Ինչպէս փոքրիկ մի բզէզ:

Եւ թէ լուսին կաթնագոյն,
Ամեն գիշեր դուրս ելնես,
Եւ ես որպէս աստղը՝ Մարս,
Հուսադէմին գամ քեզ տես:

Կամ թէ խոնարհ մանուշակ,
Իսկ ես անմեղ երեխայ,
Գամ տունկերից խոտի տակ՝
Փընջեմ, տանեմ ես ընծայ:

Կուգես դարձիր ձնծաղիկ,
Իսկ ես փոքրիկ մի մեղուիկ՝
Տըզտըզալով քեզ կծեմ,
Ժողուեմ հիւթդ ու թռչեմ:

Եւ թէ յստակ մի առուակ,
Հոսիւր վերից դէպի ցած,
Իսկ ես ներքեւ մի լճակ՝
Գրկեմ մէջս խրտրտած:

Կամ թէ բիւրեղ մի աղբիւր,
Իսկ ես տակիդ մի խոր գուշ,
Մաքիք, գառներ անթիւ բիւր—
Խմեն ջրից՝ քաղցր, կուշտ:

Եղիւր ճրագ դու միշտ վառ,
Իսկ ես թիթեռ մի խելառ.
Չորս բոլորդ պտոյտ գամ,
Ընկնեմ երես վրվրթամ:

Կամ ես ծաղիկ՝ հոտառատ,
Դու պճնասէր մի աղջիկ՝
Գաս փունջ փնջես դու առատ
Դնես կրծքիդ՝ քո փնջիկ:

Կամ թէ լինեմ մի ժեռ քար,
Իսկ դու փափուկ ու կանաչ՝
Մամուռ լինես միշտ դալար
Ու զարդարես իմ ճակատ:

Եւ թէ լինեմ կապուտակ,
Երկինք անհուն ու անծայր,
Իսկ դու փայլես բոլորակ
Ծիածանման ու անծայր:

Կուգեմ լինել կապուտակ.
Խաղաղ հանգիստ մի ծովակ,
Իսկ դու ալեաց հետ կատակ
Անես իբրեւ մի նաւակ:

Կամ թէ լինեմ մի կտրիճ,
 Զէնք ու զրահս հագիս,
 Իսկ դու սուրս իմ կտրիչ
 Կամ սաղաւարտ իմ գլխիս:

Եւ թէ մեռած ես լինեմ,
 Գերեզմանումս ննջեմ,
 Իսկ դու զարգս իմ կրծքիս
 Կամ թէ պսակ շիրիմիս:

Ուր որ գնաս, ուր լինես,
 Լինեմ քեզնից անբաժան,
 Խնչպէս մարմինս ու հոգիս,
 Մինչեւ սառը գերեզման:

Ա. Վերդեան
